ՍԱԹԵՆԻԿ ԱՂԱԲԱԲՅԱՆ
SATENIK AGHABABYAN

ՆԵՐՔԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎՈՂ ՄԱԿԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՈՎ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հատուկ անունների համակարգում առանձին խումբ են կազմում մարդանունները, ուր զանազանում են բուն անձի անուն, ազգանուն, հայրանուն, կեղծանուն, մականուն և այլն:

Հայերի անվանման բանաձևը, անցնելով ձևավորման բուռն գործընթաց, XIX դարի կեսերից իրմեջ ներառում է ազգանունը՝ որպես անձնանվանական երևույթ: Այն հայկական անձնանվանական եռաբաղադրիչ բանաձևի իրավական արժեք ունեցող հիմնական միավորներից մեկն է: Հայկական ազգանունը սահմանվում է իբրև արական արենակցական կապով միավորված մարդկանց ընդհանուր անուն: Ազգանունը անձի անհատականացման լեզվական արտահայտության կարևոր միջոց է: Այն տիպաբանորեն խիստ ինքնատիպ է: Անձնանվանական բանաձևի վերջին բաղադրիչի՝ ազգանվան կազմության մեջ, ի թիվս մյուս աղբյուրների (անձնանունների, տեղանունների, արհեստ, զբաղմունք ցույց տվող բառերի), նշանակալից են եղել բուն մականունով հիմքերը՝ **Կոյան «կարճ, փոքրամարմին», Ասլանջանյան բառաց. «առյուծանման», փխբ. «ուժեղ, հզոր», Խոչախյան «քաջ, ճարպիկ», Թաչքափուլյան «դաժան, չար»** և այլն:

Մականունը տրվում է անհատին կյանքի այս կամ այն փուլում, ըստ նրա որևէ հատկանիշի, որով նա հայտնի է ներփակ միջավայրում: Ի սկզբանե մականուն բաղադրիչը՝ որպես անձի անհատականացման միջոց, անհատի անվանը ուղեկցող միավոր էր: Մեր էպոսը ասվածի լավագույն ապացույցներն է տալիս՝ **Առյուծանն Մհեր, Ձենով Օհան, Սասունցի Դավիթ**:

Եթե արևմտահայերենում մականուն եզրույթը հստակ սահմաններ ունի և նույնանում է արևելահայերեն ազգանուն եզրույթի հետ, ապա արևելահայերենում նշանակում է այն ամենը, ինչ դրվում է անձնանվան վրա՝ բացառյալ ազգանունը: Իմաստային առումով մականուն ազգանվանական այս շերտը չափազանց տարողունակ է: Մականվանը հատուկ է արտաքին ու ներքին գնահատականը: Ներքին հատկանիշների հետ կապվող մականվանական հիմքերը մեծաքանակ են ու բազմազան: Տարօրինակ ոչինչ չկա, քանի որ համայնքում, հասարակության մեջ անհատի ներքին հատկանիշները շատ

ավելի կարևոր են համակեցությունը ապահովելու, մյուսների հետ առնչություններ իրականացնելու համար, քան արտաքին հատկանիշները, որոնք, ի վերջո, շատ ավելի դյուրին է նկատել և, ըստ այդմ, տարբերակել մարդուն: Այս կամ այն արտաքին հատկանիշ կամ ֆիզիկական թերություն ունենալն այնքան վճռորոշ չէ անձի հասարակության հետ հարաբերության համար, որքան ներքինը:

Այս հոդվածում քննվում է ներքին հատկանիշների հետ կապվող դրական երանգներով մականուն ազգանվանական հիմքերը:

Դրական երանգներով հիմքեր

Բնավորության գծեր և այլ հատկանիշներ

Թողալաք (թրք.) «իսկական», «բնական», «սովորական»+յան, Թուրֆուտ (թրք.) «զգայուն», «կարեկից» + յան, Իջաքոջ(թրք.) «հանդարտ», «մեղմ»+յան, Մահչուփ(թրք.) «զուսպ», «քաշված»+յան, Ջայիոջ(ա) (թրք.) «գործունյա», «ջանադիր»+յան,Սկլվեր(թրք.) համեստ», «ամոթխած», «ամաչկոտ»+յան, Քարշաֆջ(ա) (թրք.) «շարժուն»,«նախածեռնող» + յան, Գեոլ (թրք.) «առատածեռն», «շռայլ», «ծախսող», «մխսող»+յան, Թաբհինջ (թրք.) «զգայուն», «կարեկից», «տպավորվող»+յան, Թունդա(թրք.) «անձայն», «հանդարտ», «մեղմ»+յան, Փեղջեքեր (թրք.) «բարեհոգի», «բարեհամբույր», «բարյացկամ» +յան, Ջյուսպեկ(թրք.) «աչքիլույս»,«թանկագին»,«թանկ» + յան, Գուրջլեկ և Յուղեմեզ (թրք.) «փորձառու», «հմուտ», «վարժ», «լավատեղյակ»+յան, Թոշաուշ (թրք.) «բարեբախտ»,«երջանիկ»+յան, Դանջի (թրք.) «գիտակ», «բանիմաց», «տեղյակ»+յան, Դեգումեն (թրք.) «արժանի», «արժանավոր», «տեղյակ» +յան,Դոլպաշ (թրք. բառաց.) «լիքըգլխով, գլուխը լիքը», (փխբ.) «խելացի», «բանիմաց»+յան:

Այս խումբը աչքի է ընկնում առաջին հերթին հոմանիշների առատությամբ, որոնք ներկայացնում են մարդկային բարձր և միշտ գնահատվող հատկանիշներ՝ զգայուն, կարեկից, զուսպ, ջանադիր և գործունյա, համեստ, ամաչկոտ, ամոթխած, նախածեռնող, առատածեռն ու շռայլ, կարեկից, այլոց վիճակի մեջ մտնող, հանդարտ, մեղմ, շարժուն, անհանգիստ, ժիր, ճարպիկ, բարեհոգի, բարյացկամ, բարեհամբույր, թանկագին, աչքի լույս, հմուտ, փորձառու, խելացի, բանիմաց, բարեբախտ:

Համարձակ,քաջ,անվախ,արագաշարժ

Հերքուլ,Դել, Ջոթքա, Յըլմազ (թրք.) «խիզախ», «անվախ», «քաջ», «անձնուրաց», «խև»+յան, Քոչոլոգ «քաջ»+յան, Գիլիզ, Չարկու, Ջուստոտ (թրք.) «ճարպիկ», «ժիր», «արագաշարժ»+յան, վերջինից (հյ.բրբ.) «չուստ» «արագ», Չև (թրք. բառաց.) «սնդիկ», (փխբ.)«շարժուն», «անհանգիստ», «արագաշարժ»

+յան, Երքաղ(թրք.) «տղամարդավարի», «քաջ», «ուժեղ»+յան, Գյորքմազ/ /Գորքմազ/ Հորխմազ (թրք.) «անվախ», «համարձակ», «քաջ»+յան, Ղոչախ, Կոլմեզ, Ղահրաման, Պեծիկ, Չալախար, Քոլո (թրք.) «արագաշարժ», «արագաքայլ», «թեթևաշարժ» +յան, Գավաջ, Չիլիկ, Աթաղլի, Ալագուլ (թրք.) «համարձակ», «անվախ», «քաջ», նույնիսկ «տարօրինակ»,«անսովոր»+յան:

Սրախոս,կատակաբան,կատակասեր,զվարճախոս

Չնայած իր փոքրաթիվությանը, այս իմաստի դրսևորումները հաճախական են և շատ նշանակալից, քանի որ ստորև բերվող հատկանիշներով օժտվածները ցանկացած համայնքում, նույնիսկ մարդկանց շրջապատում միշտ ուշադրության կենտրոնում են եղել և ցանկալի.

Դրվսակ, Շախմ(ի)(թրք.) «կատակաբան», «կատակասեր» +յան, Քեվլեթեն «ուրախացնող», «զվարճացնող»+յան, Տնգոզ (բրբ.) «տրամադրությունը բարձր» + յան, Շատան(պրսկ.) «ուրախ»+յան, Զումբուշ(թրք.) «զվարթ» +յան, Սաքբազար+յան և Շաքիլավ «սրտաբաց», «անկեղծ», «ուրախամիտ», «ուրախ», «զվարթ» + յան, Մենթեմեթ, Պեբուուտ «երջանիկ», «զվարճախոս» +յան,Զենիշջ(ա), Սարագ+յան:

Արդարամիտ,ուղղամիտ,ուղղախոս,ազնիվ,անկեղծ

Դատաստան+յան,Դուզճակատ, Սալուտ «ճակատին, երեսինասող», «ազնիվ»+յան, Սանալ(թրք.) «ազնիվ», «հարգանք վայելող»+յան, Դոբր (ռուս.) «բարի», «ուղղամիտ», «ուղղախոս», «անկեղծ» +յան:

Չափավորություն, ներողամտություն, հոգատարություն, բարեհոգություն

Փեհրիզ (պրսկ.-թրք.) «չափավոր» +յան, Լաիշ (թրք.)«ներողամիտ» + յան, Խուրման(թրք.) «հեզաբարո»+յան, Հրեշտակ+յան, Մարմանդ+յան, Միամիտ+յան, Էգլջ(ա) «հեզ»,«խոնարհվող»+յան, Հարմար, Ղաբուլ «հարմարվող»+յան,Ղավբան(թրք.) «ըմբռնող»,«վիճակիմեջմտնող», +յան, Գենշեր (թրք.) «բարեհոգի», «մոծահոգի» +յան, Հոգտանյան/ /Հոգետունյան: Մեր կարծիքով երկրորդը՝ *Հոգտանյանի* տարբերակն է, և առկա է բաղարկությունը հոգի և տուն բառերի հետ:

Մարդկային այլ բարեմասնություններ

Բունդարջ(ա) (թրք.) «ժամանակին և տեղին օգնության հասնող» + յան, Հախպանջ(ա)(թրք.)«արդարամիտ»+յան, Գործուն+յան,Ճարպիկ+յան,Ճարտար +յան, Աղեկ+յան,Գլուխ+յան,Հասուն+յան,Զուգատար(արաբ.-պրսկ.) «խելացի» +յան, Գաֆալ,Գաֆալմազ(թրք.)«անհոգ», «անուշադիր»,«կարճմտածող» + յան, Աղիլան(թրք.) «խոհեմ», «ողջամիտ»+յան,Ուղուբ (թրք.) «խելահաս», «խելամիտ», «ընդունակ»+յան,Ղալմուխ (թրք.)«խելացի», «հասուն», «ընդունակ», «գլխով» + յան,Դանջ(ի)ևԴոլբաջ (թրք.) «բանիմաց», «խելացի»+յան,

Ֆիքոնով և Ղավքան(թրք.) «ըմբռնող», «խելահաս»+յան, Գուրջլեկ և Հերտեմ (թրք.) «բարեկիրթ», «ազնվաբարո» +յան, Հերտեզ (թրք.) «անսխալական» +յան, Կանգուն+յան, Շրիզ (թրք.) «քաղցրալեզու»+յան, Գանիմ (թրք.) «իր կարծիքն ունեցող», «համոզված» + յան, Հաթուք (թրք.) «հնարամիտ»+յան, Նեմքերեք և Ֆետվաչ (թրք.) «անվանի», «հեղինակավոր», «համբավավոր», «հանրահայտ», «ազդեցիկ» + յան,ԳերակետևԲեջիք (թրք.) «պիտանի», «անհրաժեշտ», «օգտակար» + յան, Յաշլեմեզ (թրք.) «տարեց»,«փորձառու» +յան: Նկատելի է, որ այս խմբի մականունները բավականին լայն ընդգրկում ունեն օգնության հասնող, արդարամիտ, կարճ մտածող, անուշադիր, խոհեմ, ողջամիտ, խելահաս, խելացի, ընդունակ, հասուն, ըմբռնող, բարեկիրթ, իր կարծիքն ունեցող, ազդեցիկ, հանրահայտ, պիտանի, տարեց, փորձառու:

Աչքի է ընկնում նաև զուտ հայկական դրսևորումների հարաբերական առատությունը՝ գործուն,ճարպիկ,ճարտար,աղեկ,հասուն:

Առանձնանում են կենդանանուններով կազմված մականուն ազգանվանական հիմքերը, որոնք զուտ փոխաբերական իմաստների կրողներ են և ունեն «նման» ընդհանուր իմաստը:

Դուդաբաշ և Ֆեբակ (թրք.) «թութականման», «կակազ» + յան, Լեբեջ (թրք.)«մշկայծայմանման»+յան, Կուկուշ (թրք.) «կկվանման» + յան , Ջաֆեր/ /Ջաֆար (թրք.) «նապաստականման»+յան,Շաքիր/ /Շիրչոտ (թրք.) «կաչաղականման», (փխբ.) «շատախոս»+յան, Մարալչ(ա) (թրք.) «եղնիկանման» +յան, Մոծակ, Ուլեզ, Յուվեզ, Ջիբին (թրք. «մոծականման», «մժեղանման»+ յան,ԳոմշոևԱնդոա(թրք.) «գոմշանման», «ցլանման»+յան, Նսնս(թրք.) «մարդանմանկապիկ» +յան,Արջ + ունց,Գել//Գիլ + ունց,Աղվես + յան,Թութղուշ (փոքրիկթռչուն,որհայտնվումէթութիհասունացմանշրջանում) + յան, Եղնուկ + յան, Ճճղուկ + յան, Ճտ «փոքրամարմին» +յան , Ճիտ են կոչում նաև փոքրագուխ մարդկանց, Ցեց «անհանգիստ»+յան,Ղուրիգ (թրք.բառաց.) «գառնուկ», (փխբ.)«մեղմ»,«համեստ»,«համբերատար»+յան, Առյուծ + յանց, Գառնիկ + յան .Այստեղ ևս թուրքերենի հետ երևում են նաև հայկական դրսևորումներ *Մոծակ,Գոմշո, Արջ, Գել//Գիլ, Աղվես, Թութղուշ, Ճիտ, Առյուծ:*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տ. Ավետիսյան, Հայկական ազգանուն, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1987, 321էջ:
2. Տ. Ավետիսյան, Հայոց ազգանունների բառարան, «Վան Արյան» հր., Ե., 2010, 388էջ:

Semantic Study of Nickname-Based Family Names Related to Inward Features

Anthroponymsform a separate group within the system of proper names with the further subdivision into first\last names, pennames, nicknames, etc. In the formation of the last component of the proper name formula, namely the family name, great was the significance of nickname bases besides other sources (such as toponyms or words denoting occupation).

There are many various nickname-based family names related to inward features.

Inward features of a person play a far more important part in communicating within other community and society members than the outward features which are easily recognized. An otward physical drawback is no obstacle to communication whereas an inward drawback may have a detrimental effect. The present paper investigates the nickname-based family names with a positive connotation.